

ՄԱՀ ԿՈՒՍԻՆ

Ցամաքեցաւ խոտով և թօթափեցաւ ծաղիկն. նսայի, ԳԼ Խ, 6.

Ա՛լ չեմ կարող այսչափ ցաւոց գիմանալ,
Թշուառ աղջիկ, աւանդ, Աստուած իմ Ա՛ն ալ...
Այնչափ աղնիւ այնչափ մատաղ ու բարի
էակ մ'անոյ՜ջ ցուրտ հողերուն տակ մարի...
Առ ինչ ուրեմն այնչափ խընամ մայրիկին,
է՛ր վաստակէր այնչափ այդ հէք այրի կին
Թէ այսքան վաղ պիտի մընար անդաւակ.—
Ո՛վ մարդ, գրուած է որ ըլլա՞ս նըշաւակ
Եւ խաղաղիկ բախտին անգուլթ հարուածոց.—
Մաղիկ մ'էր նա, հագիւ բացուած մօրն ի ծոց,
Անուշաբոյր այլ մենաւոր մի ծաղիկ,
Իբրեւ զամբիծ ճերմակ յուան խաղաղիկ.
Այլ տես, զիարդ կեանքն իւր եղև վաղանցուկ,
Այն թարմ հասակն անկաւ ի փոս մի անձուկ,
Այն հուր աչեր նուաղեցան, այն շրթունք
Ոյց իմաստին վարմանային իմաստունք.
Լճու անմիմունջ արդ կը ննջեն, այն այտեր
Ջոր մօրն համար վարդիւք պըճնեց ինքըն Տէր,
Մահուան ձեռամբ քունաթափիկ և նիհար
Կան սառնակերպ որպէս թռչուն նետահար.
Եւ այն մազեր, և դեռ անամպ այն ճակատ,
Ըզգայուն սիրտն այն և մարմին խընդակաթ,
Բոլոր այն գեղ կուսին ի հո՛վ ցնդեցաւ...
Ո՛վ Տէր, ինչո՞ւ մահկանացուն այսչափ ցաւ,
Ինչո՞ւ արգեօք թողուս մայրերն անորդի,
Հի՛մ տաս և հի՛մ առնուս, կուսին նորատի
Ճակատն անոյ՜ջ էր խամբեցնես հողոյն տակ,
Տէր, զի է մահ, և ինչ է քո նըպատակ,

Ինչեր գացին, աւանդ, ինչեր ալ կ'երթան,
Ո՛րչափ քաղցրիկ յոյսեր մարին ի մըթան,
Ո՛վ անթափանց գաղտնիք, գիտե՛իք թէ ինչո՞ւ
Գնդակ մ'անգուլթ զարնէ զթռչնիկն օդաշու,
Կամ թէ զիարդ ծաղկունք անժամ կը խամբին,
Գիտենք ինչո՞ւ բազմանան որբն և այրին,
Կեանքն աշխարհիս երազ մի է վաղանցուկ

Ամէն յոյսեր, ամէն փափագք և անձուկք
Սուա են, աւաղ, մահն է միայն ճշմարիտ,
Ի զուր ցաւոց խնդրենք պատճառ կամ առիթ,
Հիւծում մի մեծ բռնութեան մէջ արդէն կայ,
Ամէն բանի կարգաւ վախճան պիտի գայ...
Սակայն, արդեօր այսպէս է վերջն ալ մարդոյս,
Գերեզմանին դռնէն անդին չըկայ լոյս,
Նիւթոյն մահուամբ կը վերջանայ ամէն բան,
Սիրող սրտից չըկայ այլ մէկ ըստփական,
Ինչ է հոգին զոր կոչենք շունչ, ո՞վ Աստուած,
Արդեօք անոր վերջին բան մի չէ պահուած,
Տէր, ո՞ր կ'երթան մեր սիրելիքն հոգմամբ,
Պայծառ ի լոյս, կամ թանձրաստուեր ի խաւար
Օր մի զանոնք պիտի գտնենք մենք դարձեալ...

Հանգիւր խաղաղ, ո՞վ կոյս աղջիկ ողբացեալ,
Ի լրեակաց դամբանիդ, ո՞վ հէք թռչնիկ՝
Ոչ առ յաւէտ պիտի մընաս դու մենիկ.
Շիրմէն անդին դեռ կեանք մի կայ մեզ համար,
Կապուտ երկնից փայփլուն աստեղքն անհամար
Քեզ պէս հոգիք են, վերացեալ աշխարհէս...
Եւ դու մայր, աղջիկդ ի զուր կ'աշխարհես,
Ի զուր հեծես, և հառաչես ընդունայն,
Ո՛հ, փրչոց մէջ մի որոներ ծաղիկն այն,
Արեացիւր, նայէ երկնից կապոյտին,
Հոն է դստրիկդ, հոն կ'ապրի, հոն վերստին
Ուշ կամ կանուխ պիտի փարիս դու զաւկիդ,
Սիրտ առ, ձ մայր, տա՛ր այս ցաւոց մահառիթ,
Մի անիծեր զԱստուած, զաշխարհ և ըզքեզ,
Այդ դառն ողբեր, այդ հառաչանքդ աղեկէզ
Ո՛վ մայր, զաւկիդ մեծ վիշտ կու տան երկնից մէջ,
Լաց, թշուառ կին, բայց կա՛կ պահաւոր քո անչէջ.
Հոգւով յօժար, գիտեմ, մարմնով ես տկար,
Լաց, բայց յուսմ, Աստուած քեզ տայ մըխիթար...

Քաղկեդոն

Կարոտես Ա. Ոսկեւս